


“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՅԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 46:

ՀԱՏՈՐ ԺԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1887

ԹԻՒ 12



ԴԱՄԱՍԿՈՍ

Դամասկոս է աշխարհիս հնագոյն քաղաքաց մին, վասն զի կար Աբրահամի ժամանակէն առաջ (Եննդ. ԺԵ. 2): «Ան փողոցը որ Ուղիղ կ'ըսուի» (Գործ. Թ. 11) տակաւին նոյն անունը կը կրէ ինչպէս առաքելոց օրերը: Արարք կ'ըսեն թէ Ուղիղ կը կոչուի այն վասն զի աւելի ուղիղ է քան ուրրուն խցահանը, և ոչ ուղիղ ինչպէս ծիւրանի գօտին: Հիմա ալ ճիշդ այնպիսի տուներ կան պարսպին վրայ ինչպէս այն տունը որոյ պատուհանէն դամ-

ԴԱՄԱՍԿՈՍ

բիւղի մէջ վար կայտելով իջուցին զՊօղոս (Գործ. Թ. 25): Դամասկոսի պատկերին մէջ զոր կը դնենք հոս, կը տեսնուի Պարասա գետը որ կը կարծուի թէ հին Աբանան է, մին երկու գետերէն զորս յիշելէ ետքը բորոտ ՚էեման, կ'ըսէ. «Միթէ չե՞մ' հրնար անոնց մէջը լուացուիլ ու մաքրուիլ» (Գ. Թագ. Ե. 12): Թերևս Սուրբ Երկրէն դուրս չկայ ուրիշ տեղ մը որ այնչափ յաճախ յիշուած ըլլայ Աստուածաշնչին մէջ որչափ Դամասկոս:

Դամասկոս շրջապատեալ է պողաբեր դաշտերով և պարտէզներով, և շատ գեղեցիկ կ'երևի դուրսէն, բայց արևելեան քաղաքաց շատերուն նման՝ փողոցներն են շատ նեղ և լաւ չեն յատակուած: Ամենէն հռչակաւոր շինուածոց կարգէն է Մեծ մկրիթը, որ ժամանակաւ Քրիստոնէից եկեղեցի էր, և որոյ դուրսին ներքև կ'ըսուի թէ թաղուեցաւ Յովհաննէս Մկրտչին գըլուխը: Կ'ըսուի թէ Նէեմանայ յիշած Ռեմոնի առճարը նոյն տեղը շինուած էր, և հաւանականապէս կուոյ այս տաճարին մէջ գտաւ Աքաղ թագա-

ւորն այն սեղանը որոյ օրինակը զրկեց
Երուսաղէմ (Գ թագ. Ժ. 9. 10):

Քաղաքին մէջ կը գտնուին ուրիշ
չքեղ մզկիթներ ևս, նաև շատ մը
պատուական բաղանիքներ մարմարին
քարերով յատակուած, և լաւ շին-
ուած վաճառանոցներ բազմաթիւ սիւ-
ներով: Գրեթէ ամէն տուն աղբիւր
ունի իւր գաւթին կեդրոնը: Խաները
շատ են և անոնցմէ ոմանք շատ հին:
Մեծ կառքեր ամէն օր կ'երթնեն
Գամասկոսի և Պէյրութի մէջտեղ աղ-
ւոր շինուած կառուղւոյ մը վրայէն:

ՍԷՐԻ ԳՈՐԾՈՎ ՅԱՅՏՆԷ

Քաւական չէ մեզ սիրել մեր շուրջ
գտնուողները: Պարտիսք ջանալ յայտ.

ձիշդ ինչպէս մարդիկ կրնան այս
կերպով գրգռել զիրար բարկութեան
և ցասման, նոյնպէս մենք կրնանք
գրգռել զմիմեանս սիրել զիրար:

Կրնանք գտնել կերպեր թէ ինչպէս
կարող ենք հաճեցունել զնոսա, կըր-
նանք հսկել անոնց տկարութեանց
վրայ, սորվիլ թէ ինչպէս կարող ենք
զօրացունել զնոսա, և սիրովի զնոսա,
և օգնել նոցա: Եւ կենաց մէջ այսպիսի
փոքրիկ, սիրուն և մեղմ քաղաքա-
վարութեամբ ոչ միայն պիտի ըլլանք
պատճառ այլոց օրհնուելուն և բարիք
վայելելուն, այլ պիտի ցոլացունենք
արեգական ճառագայթ աշխարհի մէջ:
Բայց երբ կը գրգռենք ուրիշները սի-
րոյ, մենք փոխարէն կ'ընդունինք դէպ ի

մանց, խառն կը պատժուէր: Այս հա-
լածման ենթակայ չըլլալու համար շատ
Ունդղիացիք կը փախչէին կ'ապաստա-
նէին Հոլանտա: Բայց ի Հոլանտա բա-
ւական տեղ կարող չըլլալով գտնել
իրենց օր ըստ օրէ աճող ընտանեաց
համար, որոշեցին գաղթականութիւն
մը հաստատել Ամերիկայի ամայի տեղ-
ուանքը, և յամին 1620, Դեկտեմբեր
ամսուն մէջ 102 անձերէ բաղկացեալ
գաղթական այս խումբը ելան ցամաք
Սմերթկա, Փլիմութ, Մասսուչուսէց նա-
հանգին մէջ:

Մեր առջև գտնուող պատկերը կը
ներկայացունէ գաղթողներէն մէկ
բռնին որ վերջին հայեաց մը կը նե-



ՄԻՆԱՆ ԹՈՂՈՒՄ

նել այդ սէրը: Մարդասիրական զգաց-
մունք աղէկ են, բայց ևս աւելի աղէկ
են անոնցմէ յառաջ եկած մարդա-
սիրական գործերը:

Իրար «սիրոյ և բարեգործութեան
գրգռել» կը յորդորէ Առաքեալը:
Նոյնչափ զիւրին է գրգռել ուրիշը
սիրոյ որչափ գրգռել ատելութեան:
Ամէն մարդ ունի տկար կողմ մը, ցա-
ւող կէտ մը, որուն եթէ դպչինք կը
ցաւցունենք և կը չարարենք: Ընտան-
եաց կամ ընկերութեան մէջ որչափ
չատեր իրենց բան գործ ըրած են
փնտռել ասոնց նման տեղեր որպէս
զի ցաւցունեն և չարարեն իրենց ըն-
կերները: Եւ անոնք բան մը այնչափ
չեն սիրեր որչափ ակնարկել կամ յի-
շել շփոթութիւն, նեղութիւն և ցաւ
յառաջ բերող բաներ որոց ծանօթ են
իրենք:

մեզ սէր և համակրանք մեր շուրջ բո-
լոր գտնուողներէն:

Ո՛րչափ թշուառ տուներ կրնային
ըլլալ երջանիկ, եթէ անոնց մէջ բնա-
կողք ջանային դասել իրենց անհան-
գիստ զգացումը և բարկութիւնը և
տրտայայտէին իրենց սէրը բանիւ և
գործով:

ՄԻՆԱԿ ԹՈՂՈՒՄ

Մեր օրերուն մէջ մենք հազիւ կը
համարինք աղգ մը լուսաւորեալ կոչ-
ուելու արժանի եթէ շտար կրօնական
աղատութիւն. բայց ժամանակաւ այս-
պէս չէր: Ասկէ նուազ քան երեք դար
առաջ եթէ մարդ ներկայ չգտնուէր
Ունդղիոյ պետական կրօնքի պաշտա-

տեն Ովկիանոսին վրայէն զանոնք հոն
բերող նաւին վրայ: Վսեմ էր անշուշտ
այն վայրկեանը երբ անոնք տեսան զի-
րենք միակ թողուած օտար ծովեղեր
մը վրայ ուր չէին կարող տեսնել ու-
րիշ բան բայց միայն անտառներ վայ-
րենի անասուններով և աւելի վայրե-
նի մարդերով:

Բայց անոնք արի սիրտեր ունէին,
և պատրաստ էին կրել իրենց առջև
գտնուած բոլոր այն փորձանքները ու-
նենայլու համար արտօնութիւն պաշ-
տել գլխաւորած իրենց խղճմտանքին
համեմատ: Զբաղեցան տուններ շինե-
լու, նաև սրտորդութեան և ձկնոր-
սութեան, ուտեստ հայթայթելու հա-
մար: Իրենց կրած նեղութեանց և
անձածկոյթ բնակութեանց պատճա-

ուաւ անոնց կէսը մեռան առաջին ճը-
մերան մէջ, և սակայն ողջ մնացող-
ներէն ոչ մէկը կ'ուզէր օգուտ քաղել
պատեն ժամանակէ վերտօին Անգղիա
դառնալ գարունին: Զարմանք չէ ու-
րեմն որ անոնց սերունդը մեծ պատ-
ուով կը պահեն նոցա յիշատակը, և
գրեթէ սրբազան կը համարին այն հողն
ուր անոնք երան ցամաք ասկէ 267
տարի առաջ:

ՄԱՆՈՒԿԸ ԲԱՐԻ ԸՆԵԼ

Յակոբ և Թովմաս և փոքրիկ մանու-
կը կը խաղային, թէպէտ ոչ շատ հա-
ճելի կերպով, վասն զի մանկիկը միշտ
չէր կրնար հասկնալ թէ ե՞րբ էր իւր
կարգը և ե՞րբ չէր, և թէ ին-
չու համար իրեն կարգը չէր
գար միշտ: Ուստի կը խաղար
երբ պէտք չէր որ խաղար, և
կիրք կ'եղէր կուլար եթէ
մէկն ուզէր արգելել զնա:

Յակոբ շատ համբերութիւն
չունէր, և սկսաւ խորհիլ թէ
մանուկը փոքրիկ բռնաւոր մըն
է, թէպէտ առանց ուզելու
ըլլալ այնպէս. և Յակոբի սիր-
տը կը նեղանար երբ մանուկը
յաճախ կ'ուզէր խաղին մէջ
մտնել: Եւ ուստի պոռաց,
«Մայրիկ, եկուր և ըսէ որ
մանուկը շիտակ խաղայ:» Եւ
երբ մայրիկն եկաւ անոնց քով,
Յակոբ ըսաւ աւելի լուրջ կեր-
պով, «կը դարմանամ թէ ին-
չու համար Աստուած հան-
դարտ մանուկ մը չկրնար ըս-
տեղծել փոխանակ այսպէս
դեղ և բարկացոտ մանկան
մը:»

Մայրիկը այս խօսքը երբ լսեց հա-
ճոյք զգաց մանաւանդ փոխանակ սոս-
կալու: Եւ արդարև Պարոն Յակոբ կ'ե-
րևէր թէ սոսկաց երբ մայրիկը պա-
տասխանեց հանդարտութեամբ. «Այն
ժամանակէն հետէ որ դուն սկսար քո
վարունքովդ ձեռակերպել մանկան բը-
նաւորութիւնը, նա շատ բարի պիտի
չըլլար, այլ պիտի նմանէր ճիշդ քեզի:»
«Ե՞ս բարի պիտի ընեմ մանուկը», ը-
սաւ Յակոբ, շատ զարմացած: «Այո»,
ըսաւ մայրիկը, «դուն օգնած ես ձեռ-
կերպել անոր բնութիւնը այն ժամա-
նակէն ի վեր որ Աստուած մեզի տուաւ
զնա: Աստուած մանուկը ստեղծեց
միայն: Դուն և Թովմաս քան ուրիշ որ
և իցէ մէկը պիտի ընէք զայն բարի և
կամ չար մանուկ: Հիմա նայէ անոր
վրայ:»

Մայրիկը երբ զայս ըսաւ, Յակոբ որ
կանգնած էր ձեռուրներն ետեւ կա-

պած, զարմանալով թէ ինչ ըսել կ'ու-
զէր մայրը, աչքը դարձուց իւր փոք-
րիկ եղբոր վրայ և տեսաւ որ մանուկն
ալ կանգնած էր ճիշդ Յակոբի նման
դիրքով, ձեռուրներն ետեւ կապած,
շանալով որ երեւի ճիշդ անոր նման
որչափ որ կարելի էր:


«Գլխարկդ դիտուդ մէկ կողման վրայ
քաշէ», ըսաւ մայրիկը. Յակոբ այնպէս
ըրաւ. մանուկն ալ ճիշդ նոյնն ըրաւ
անմիջապէս: «Քիչ մը սուլէ», ըսաւ
մայրիկը: Այն վայրկեանին որ մանուկը
լսեց ձանցը, ինքն ալ սկսաւ պատրաս-
տել իւր փոքրիկ շրթունքը և կը շա-
նար բոլոր կարողութեամբ հանել
սուրբու ձայն:

«Մանուկը ճիշդ պիտի ըլլայ այն
ինչ որ դուք կ'ընէք, տղաք: Նա կը
շանայ միայն նմանիլ ձեզ և ուրիշնե-
րու, և որովհետև ժամանակին մեծ
մասը ձեր հետ է, իրօք դուք կ'ընէք
զնա բարի կամ չար:» ըսաւ մայրը:

«Ղաւ ուրեմն, Թովմաս», ըսաւ Յա-
կոբ վայրկեան մը խորհելէ ետքը, «այ-
սուհետև այլ ևս գէշ օրինակ չըլլանք
մանկիկին:» Եւ Թովմաս տուաւ հա-
ւանութիւն:

ՍԻՆՔՈՆԱՅԻ ՄԱՌԸ

Գանի՞ անձինք այս երկրին մէջ գի-
տեն արդեօք իւրեանց փորձառու-
թեամբ թէ ինչ է ջերմը: Որովհետև
մենք քանի մը որ սուսը մնացինք այս



ՍԻՆՔՈՆԱՅԻ ՄԱՌԸ

Այս բանը բարկացուց Յակոբը որ
դարձաւ և ըսաւ մանուկին, «Բաւական
է որ ծաղրես զիս», և հրեց զնա: Մա-
նուկն ալ ճիշ մը արձակեց և բարկա-
նալով հրեց իւր եղբայրը: «Տես դուն
տակաւին քեզի նման կ'ընես մանու-
կը», ըսաւ մայրը, «նա ճիշդ քո փոք-
րիկ նմանութիւնդ է: Հիմա փորձէ
զնա ընել ուրիշ բան մը: Դիբ բազուկ-
ներդ անոր պարանոցին շուրջը և համ-
բուրէ զնա:»

Յակոբ հնազանդեցաւ, թէպէտ մա-
նուանդ դժկամակութեամբ, և հաճա-
մանկան երեսն իսկոյն զուարթացաւ,
և Յակոբը ընդունեց անկէ սիրոյ համ-
բոյր և գոռանք:

«Ես ըսի քեզ որ մանուկը դեղ չըլ-
լար եթէ դուն չըլլաս», ըսաւ Թով-
մաս որ հետաքրքրութեամբ մտիկ կ'ը-
նէր մինչև հիմա:

Տիրը մեծարելու համար, մեր քով
գտնուած պատկերներէն կ'ընարենք
հատ մը որ կը ներկայացունէ մեզ յիշ-
եալ հիւանդութեան դարմանը:

Կ'եղեր որմէ կը հանուի շերմին դե-
ղը, կը կոչուի սինքոնա, (չլաւ չլաւ ըս-
ուածը այս երկրին մէջ) վասն զի ա-
նոր արժէքն առաջին անգամ յերո-
պա ճանչցուեցաւ Բերուի Սպանիա-
կան փոխարքային կնոջ, Սինքոնայի,
ջերմը բժշկելով: Կը կոչուի նաև Բե-
րուի կեղև, երկրին անուամբ որոյ բնիկ
բոյսն է: Անոր Սպանիա մասնէն չուտ
եաքը, ձիգուիթը բերել տուին անկէ
Բերուի մէջ գտնուող իրենց ձիգուիթ
եղբայր ձեռքով, և որովհետև եր-
կար ժամանակ եւրոպայ կրնար մտնել
ձիգուիթ կրօնաւորաց ձեռքով միայն,
հասարակօրէն կը կոչուէր ձիգուիթի
կեղև անուամբ:

Անգղիացի մը գտնելով սինքրոնա դեղը, բժշկեց Գաղիոյ թագաժառանգ իշխանը, և յետոյ վաճառեց իւր դաղոմնիքը Գաղիոյ կառավարութեան մեծ գումար մը ստակ ընդունելով անոր փոխարէն, նաև տար տարուան մեծ նախորհ անոր առևտրոյն, այսինքն՝ առանձին արտօնութիւն անոր վաճառականութիւնն ընելու: Թէ ինչ մեծ շահ կը բերէր անոր առևտուրը, կըրնանք դատել սա իրողութենէն որ անոր ունկին, այսինքն 8 արէմը, կը ծախուէր 3 լիւրայի: Թէպէտ երբեմն մեզ չափալանց կը թուի դեղագործաց մեծ պահանջած ստակը դեղորտից համար, բան մը չէ բաղդատելով վերջիչեալ գնոյն հետ:

Սինքրոնայի ծառը կը գտնուի Անտեան լեռանց կողերուն վրայ եղող խիտ անտառաց մէջ, և կը ժողվեն զայն Մաթիւն մինչև Նոյեմբեր մարդիկ որ վրաններով կը բնակին յիշեալ ամիսներն այն անտառաց մէջ: Անոնք պէտք ունին ճանչնալ և խորել ոչ միայն ճիշդ ծառը անոր նմանող շատ տեսակներուն մէջէն որոշելով, այլ նաև ծառին ճիշդ տարիքը երբ անոր կեղևը կը գտնուի իւր բարձրագոյն կատարելութեան մէջ: Սովորաբար ծառը կը կտորի արմատէն և կեղևը կը հանուի, և անոր արմատէն կ'ելլէ նոր ծառ մը: Հնդիկք երբեմն չուղելով ծառը արմատէն կտրելու աշխատութիւնն յանձն առնուլ, անոր կեղևը միայն կը հանեն, և այսպէս յաւիտեան կը կորսնցունեն ծառը:

Երբ արդիւնքն այնպէս մեծ է որ մտցուած է այն Հնդկաստան շատ աշխատութեամբ և ծախքով: Հիմա սինքրոնայի ընդարձակ ծառաստանք կան Հիմալայա լեռանց կողերուն վրայ, և հարաւային Հնդկաստան և Սեյլան կը զոնոյն մէջ:

Նոյն իսկ ծառին կեղևը գրեթէ չգործածուիր հիմա: Քիմիագէտը հասկըցած են թէ անոր զօրութիւնը կը կայանայ քիմի կաշտած նիւթի մը մէջ որ կը հանուի անոր կեղևէն: Այս կը խառնուի ծծմբային թթուի (սուլֆուրիկ) հետ, և կ'ըլլայ փփփփ րը փփփփ, կամ, ինչպէս երբեմն կը կոչուի այս երկրին մէջ, «սուլֆուր»: Կը յուսանք թէ մեր փոքրիկ ընթերցողներէն ոչ ոք պէտք պիտի ունենայ գործածել այն լեղի նիւթէն: Բայց երբ հարկը պահանջէ, կը յուսանք թէ պիտի գործածեն քաջութեամբ և առանց ոգուաբով իրենց մօր ներութիւն տալու:

ՅԱԶՈՂ ԿԵՐՊ ՄԸ ՅԱՆՅԱՆՔՆ ՅԵՐԵՒԱՆ ՀԱՆՆՆՈՒ

Սողոմոն թագաւորին օրերէն հետէ և նորա իմաստուն հնարքէն ի վեր գտնելու թէ ով էր իւր առջև բերուած մանկան ճշմարիտ մայրը, Արևելեան ազգաց մէջ յոյժ ճարտար հրնարներ կան յանցանք յերևան հանելու: Հալէպի մէջ Անգղիոյ հիւպատոսն

անգամ մը մեծ հացկերոյթ մը ընելէն ետքը իմացուեցաւ որ արծաթ սպասներէն քանի մը հատը աներեւոյթ եղած էին: Կասկած եղաւ ծառայից վրայ որք նոյն ժամանակ կը գտնուէին տանը մէջ:

Հիւպատոսը լաւ մտածելէն ետքը կանչեց իւր Գաղիոյ որ իւր ծառայից ամենէն հանճարեղն էր, և հարցաբըննեց զնա: Քաջաբ կը պնդէր թէ չէր գողցած արծաթեղէնները, և թէ չէր գիտեր նաև թէ ով գողցած էր: Հիւպատոսն ըլլալով սրամիտ մարդ, Ըստ, «Հարկ չկայ քեզ ուրանալ: Ես իրաւացի պատճառներ ունիմ կասկածելու թէ դուն ես գողը, և միտք ունիմ մատնել քեզ կառավարութեան եթէ չբերես ինձ արծաթեղէններս քսան և չորս ժամու մէջ»:

«Ես իմ բոլոր կարողութեամբս պիտի աշխատիմ գտնել գողը»:

Ըստ Գաղիոյն ա. հարեկած: «Բայց պիտի խնդրեմ ձեռնէ որ ի փոխարէն դուք ալ ընէք ինչ որ ըսեմ ձեզ»:

Հիւպատոսը խօսք տուաւ, և Գաղիոյ մեկնեցաւ անկէ: Ժամէ մը ետքը դարձաւ ետ իւր հետ բերելով փոքրիկ էջ մը և խնդրեց որ կենդանին դրուի մութ սենեակ մը և տան բոլոր ծառաները հաւաքուին մէկտեղ:

Երբ եղաւ այս կարգադրութեանց համեմատ, Գաղիոյն ըստ, «Հիմա մտնենք այս սենեակը մի առ մի, և բռնենք իշուն պոչէն և քաշենք: Էջը պիտի չտայ նշան բայց այն ատեն միայն որ գողն ըլլայ մեր մէջ, և եթէ մեր մէջ է, կրնաք վտահ ըլլալ թէ պիտի զուշէ, և ցուցնէ գողը: «Հիմա»:

Ըստ հիւպատոսին, «առաջ դուն գնա և քաշէ պոչէն»:

Ամէն մարդ ըրաւ ինչ որ ըսաւ Գաղիոյն, բայց էջը չզոնչեց:

«Ինչ զարմանալի բան», ըստ Գաղիոյն, երբ կատարուեցան ըսածները: «Կերևի թէ մեր մէջէն պիտի չզրուուի գողը: Ես ուրիշ մեկնութիւն չեմ կրնար տալ ասոր: Բոլորակ մը կազմեցէք իմ հետս սօքի վրայ կայնած, տիկնայք և տեսքը, և վեր բռնեցէք ձեր ձեռուները»:

Ամէն մարդ ըրաւ այնպէս: «Սհա՛ գողը, պարոն Հիւպատոս», գոչեց Գաղիոյն, ցուցնելով ծառայ մը: «Կը տեսնէք որ ամէն ով որ քաշած է էշուն պոչէն, անոր ձեռքը սեցած է, այս մարդը չէ դպրոց պոչին և ձեռքը մաքուր է»:

Մարդը խոստովանեցաւ, և արծաթեղէնները տեղը տրուեցան:

ԲՈՒՈՐ ՁՄԵՌՆ Ի ԲՈՒՆ

(Երեւանի Բերդապետ)

Բնական պատմութեան մէջ քիչ բաներ կը կարգանք աւելի հետաքրքրաշարժ քան որչափ ոմանց կենդանեաց թմրիլը ձմերան մէջ: Այս հասարակ է շատ կենդանեաց, բայց մենք կը համարձակինք յայտնել մեր կարծիքը թէ հազուադէպ բան է որ կենդանի մը բոլոր ձմերու երկարատե թմրութեան մէջ մնայ: Օրինակի համար քանի գիւղացի տղայք գտած են անտառի մուկ մը թմրեալ վիճակի մէջ: Հոս կայ Հարթֆորդցի պարոնի մը նկարագրութիւնը թէ այն թմրութիւնը ինչպէս կ'ըլլայ: Այս անձը պահած էր անտառի մուկ մը իբրև սիրուն կենդանի: Եւ այսպէս կը պատմէ:

«Երբ ձմերու եկաւ, կենդանույն վանդակը դրուեցաւ տան տաք մէկ անկիւնը և կենդանին մտաւ անոր մէջ, շտկեց իւր անկողինը խնամով, և թքմրեցաւ: Իբր վեց շաբաթ ժամանակ անցաւ և յերևան չեկաւ կենդանին կամ չառաւ կերակուր: Հանեցի վանդակէն դուրս և բերի հիւրանոցը»:

«Կենդանութիւն չէր երևեր անոր վրայ, գնդակի ձև առած էր, քիթը թաղուած էր իբր թէ փորին ստորին մասին մէջ և ծածկուած էր պոչովը: Շատ անգամ գլորեցինք կապերսին վրայ բայց բնաւ տեսանելի փոփոխութիւն մը չեղաւ անոր թմրեալ վիճակին վրայ»:

«Յետոյ կրակին շատ մօտը դրի զայն և շուն կրակին քով պառկեցունելով դրի անտառի մուկը անոր գիրկը: Իբր կէս ժամէն կենդանին կամաց կամաց քակուեցաւ վերցուց քիթը կապերտէն, քանի մը վայրկեան նայեցաւ չորս կողմը և յետոյ մեղմով սողոսկեցաւ մէկը շան քովէն և սենեկին մէջ աստ և անդ կ'երթար իբր թէ փնտրուելով իւր անկողինը»:

Վեր առի գետնէն և վար տարի գրի գայն գարձեալ իւր վանդակին մէջ, ուր ինկաւ քնոյ մէջ, և քնացաւ այնպէս խոր ինչպէս առաջ մինչև որ գարունն երևցաւ»:

«Երբ եղաւ գարուն, և ծառերուն տերևները յերևան եկան, անտառի մուկը այնպէս աշխոյժ և կայտառ եղաւ որ յաճախ հիւրանոցը կը բերէինք: Կենդանին յարող ձմերու ևս դարձեալ նոյն թմրեալ վիճակին մէջ ինկաւ և բնաւ չէր երևեր թէ ներութիւն մը կը կրէր իւր երկար քնէն»:

Ամերիկայի Միտիանոսոց ընթերցանութեան Երկրէն Արտօնատէր Զ. Բ. ՆՐԻՆ
 Տնօրէն—Միւլպիտ Հ. Ս. ՄԱՐԿԵՆԸՄ
 Յինճանճոյար Եղուշու
 ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ
 Ի ՏԳՐԱՆՆ Ա. ՅԱՆՈՒ ԳՈՍՏԱՆՆ